

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի պարոն խմբագիր,

«ՎԷՄ» հանդեսի ԺԸ. գրքի «Հին Թուրքեր» բաժնում տպւած են Երկայնաբաղուկ Արղութեանների իշխանական տոհմին վերաբերեալ փաստաթղթեր եւ խմբագրութեան կողմից նրանց տրւած է նախաբան եւ վերջաբան: Առաջինի մէջ շեշտւած է հետեւեալ խօսքերով Յովսէփ Արք. Արղութեանի գերը.

« Յովսէփ Արղութեան Արք. 18-րդ դարու վերջերի հայ ամենաազգասէր գէմքերից մէկն է: Մասնաւորապէս մեծ է նրա կատարած գերը Ռուսաստանի կովկասեան քաղաքականութեան մէջ:» ... եւ՝ «նա այն հայերից էր, որ ռուսների ձեռքին գործիք ծառայելու աստիճան նւիրեցին այդ քաղաքականութեան, եւ խոշոր ծառայութիւններ մատուցին ռուս դիւանագիտութեան ու զէնքի յաջողութեան: Արղութեանի անմիջական աջակցութեամբ էր, որ տեղահանւեց ու փոշիացաւ Խրիմի զօրաւոր հայ գաղութը: Նոյն Արղութեանը կարեւոր օգնութիւն ցոյց տւեց ռուսներին եւ՝ Վրաստանի կցման, եւ՝ կովկասեան մի շարք հողամասերի դրամման մէջ»: Եւ յետոյ՝ «Ինչպէս ստորեւ բերող փաստաթղթերը ցոյց են տալիս, Արղութեան Արք. նոյնքան եռանդով աշխատել է եւ իր անձի եւ իւրայինների շահի համար»:

Վերջաբանում ասուում է.

« Պալէլ ցարը 1800 թ. մարտ 29-ին հրովարտակով յայտարարում է Արղութեան – Երկայնաբաղուկների տոհմը իշխանական: Հետո՞ւ է Արղութեան – Երկայնաբաղուկների մանրամասնութիւնները: Յարը տաքբերական են այս հրովարտակի մանրամասնութիւնները: Յարը ամբողջապէս իւրացնում է Յովսէփ Արք.-ի խնդրագրում պատմւած հէքեաթները՝ պարսից Արտաշէս թագաւորից սկսած մինչեւ վերջ»:

Նախ եւ առաջ, այս վերջին յայտարարութեան դէմ, որ անճիշտ է, եւ ուղում եմ բողոքել՝ ի նկատի ունենալով այն ժամանակւայ հայոց եւ վրաց պատմութեան մակարդակը, եւ մինչեւ անգամ նրանց յոյց եւ վրաց պատմութեան մակարդակը: Մեր տոհմի մասին խնդրագրում բերւած հիմնական մակարդակը: Մեր տոհմի մասին խնդրագրում բերւած պատմական տեղեկութիւնների մէջ կարող են ահամայն անճշտութիւններ, սխալներ լինել, բայց որակել Յովսէփ Արք.-ի ամբողջ խնդրա-

դրի բովանդակութիւնը սուտ — դա աւելի մեծ անճշտութիւն է, քան խնդրագրինը :

Եթէ մեր տոմարի ծագումը Արտաշէս պարսից թագաւորից աւանդութիւն է, որ փաստերով չի կարող ապացուցուել, Յովսէփ Արք.—ի խնդրագրի միւս մասերը մեր տոմարի անցեալի մասին չեն կարող հէքեաթ կոչուել, քանի որ նրանք պատմական փաստեր են վրաց եւ հայոց պատմութեան մէջ յիշատակած : Զաքարէ եւ Իվանէ սպասալարները եւ նրանց նախնիքներն ու յաջորդները մեծ դեր են կատարել թէ վրաց եւ թէ հայոց մէջ՝ Brosset, Գարեգին Արք. Յովսէփեան, Կիրակոս Գանձակեցի եւ Անույ արձանագրութիւնները դրան վկայ են : Չեն կարող սուտեր լինել եւ նոյն խնդրագրում բերած Յովսէփ Արք.—ի Ռուսաստանին մատուցած ծառայութիւնները մասին տեղեկութիւնները, որոնք վերաբերում էին վերջին 30 տարիների շրջանին եւ հեշտ կերպով ստուգելի էին :

Ինչ վերաբերում է նրան, որ Յովսէփ Արք. իր գործունէութեան մէջ եղել է ուսանելի ձեռքին խաղալիք, գործիք — այդ էլ պէտք է ապացուցանել, ինչպէս եւ այն մեղադրանքները, որ Նոր — Նախընկալ քաղաքի հիմնադրութեան համար «նա տեղահանեց եւ փոշիացրեց Խրիմի զօրաւոր հայ գաղութը» :

Յովսէփ Արք. գաղթեցրեց Ղրիմից 20 հազարի չափ հայեր, նրանց ղեկավարելու համար Ռուսաստանի սահմաններում, ուր նրանք պէտք է լինէին անհամեմատ աւելի լաւ պայմանների մէջ, քան թէ մեր խեղճ եղբայրները, որոնք մնացին ամէն տեղ այլուր մահմետական տիրապետութեան տակ, եւ այդ, իմ կարծիքով, չի կարող վիճելի լինել : Ուրեմն, այս դէպքում պէտք է շնորհակալ լինել Յովսէփ Արք.—ին եւ ոչ մեղադրել նրան :

Ենթադրել, ըստ «Վէմ»-ի խմբագրութեան, որ նա եղել է «գործիք ուսանելի ձեռքին», իր մատուցած ծառայութիւններով ուսա պետութեանը — այդ էլ անհիմն է : Ծառայելով ուսանելին, աջակցելով նրանց պետութեան տարածման՝ նա միեւնոյն ժամանակ ծառայեց եւ իր ազգին, աշխատելով օգնել նրան ազատելու պարսից եւ տաճկաց լծից : Այդ նպատակին ձգտում էին հայերը վաղուց՝ դեռ իրենց յոյսերը ուսանելի վրա, եւ չեն սխալուել, որովհետեւ ոչ մի տիրապետութիւն այնքան բարեբար չի եղել Հայաստանի եւ Կովկասի ուրիշ մասերի համար, որքան ուսանելին : Ուրեմն, ինչի՞ց է երեւում, որ Յովսէփ Արք. գործել է անգիտակից հայ շահերին, կամ դրդւած տարբեր նկատումներից, եւ ոչ հայ ազգի օգտից, եւ դարձել է «գործիք» որ եւ է մէկի ձեռքին :

Նոյնպէս ապացոյցներ ի կարօտ է, որ Յովսէփ Արք. «նոյնքան եռանդով է աշխատել իրա անձի եւ իւրայինների շահի համար» : Բերած թղթերը ապացուցում են, որ նրա աշխատանքները վարձատրւել են իրեն շնորհւած իշխանական տիտղոսով եւ 10 հազար դեսեատինի կալւածքով նրա հիմնած Գրիգորիայով քաղաքի մօտերը, եւ ուրիշ ոչինչ : Այդ երկու զնահատանքները Յովսէփ Արք.—ին, ստացւած ոռոսաց Պօղոս Կայսրից եւ Մեծ Եկատերինայից — սովորական վարձատրութիւններ էին պետութեան մատուցւած ծառայութիւնների համար, որոնք նրա գէպքում զուգադիպում էին Հայ աղղի շահերի հետ եւ ոչ թէ վնասում էին նրանց : Ոչ կայքի մեծութիւնը, ոչ էլ նրա արժէքը, համեմատւած այն մեծ կալւածքների մեծութեան հետ, որոնք շնորհւում էին այն ժամանակ, ոչինչ արտաքոյ կարգի բան չէին ներկայացնում, քանի որ նրա ստացած կայքի դեսեատինի այն ժամանակւայ գլինը մի ուրբուց աւելի չէր :

Նման կերպով հետազայում վարձատրւել են եւ Միքայէլ Լոռիս — Մելիքով՝ ստանալով կոմսութիւն եւ կալւածք Հիւսիսային Կովկասում, եւ հայաղղի զօրավար Լաղարեւ՝ ստանալով 10 դեսեատին Բաղլայ նաւթային հողերից՝ իրենց մատուցած ծառայութեանց համար ոռոս պետութեան :

Կրկնում եմ՝ խմբագրութեան պակասում են փաստեր՝ մեղադրելու համար Յովսէփ Արք. Արղութեանին, որ «18-րդ դարու վերջերի հայ ամենաաչքառու գէմքերից մէկն է», ըստ խմբագրութեան, մասնաւորապէս իր կատարած դերով Ռուսաստանի կովկասեան քաղաքականութեան մէջ :

1) որ նա իր ներկայացրած խնդրագրի մէջ «սկզբից մինչեւ վերջ» սուտեր է շարել,

2) որ նա ծառայութիւններ մատուցանելով ոռոս պետութեան՝ «նոյնքան եռանդով աշխատել է եւ իր անձի եւ իւրայինների շահի համար», եւ

3) թէ «նա այն հայերից էր, որ ոռոսների ձեռքին գործիք ծառայելու աստիճան նւիրւեցին այդ (ոռոսաց) քաղաքականութեան» :

Խնդրելով Ձեզ, պարոն խմբագիր, տպել իմ այս նամակը Ձեր հանդէսի մօտակայ համարում՝ մնամ յարգանք,

ԻՇԽԱՆ ԲՈՐԻՍ ԵՐԿԱՅՆԱՅԱՂՈՒԿ ԱՐԴՈ

Ապրիլ, 11 Օգոստ.—ի 1937 թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ.— Սիրով տեղ տալով իշխ. Բ. Արղութեանի նամակին՝ մենք միանգամայն բնական եւ հասկանալի

նրա նախանձախնդրութիւնը Արղուրեան տոնին եւ նրա ակնաւոր ներկայացուցչին վերաբերող խնդիրներում, բայց, ի հարկէ, չենք կարող համաձայնել նրա հետ Յովս. Արք. Արղուրեանի պատմական դերի գնահատութեան մասին, ոչ էլ փոխել մեր կարծիքը Արղուրեանի իշխանական տիրոջ ստանալու պարագաների մասին: Եւ այս հանգամանքը բնաւ չի կարող հակասել մեր այն կարծիքին, թէ՛ «Յովսէփ Արք. Արղուրեանը 18-րդ դարի վերջերի հայ ամենաաչառու դէմքերից մէկն է եղել»:

Յովս. Արք. Արղուրեանը, անշուշտ, հայրենասէր մարդ էր եւ ծառայելով ռուս գահին՝ նա, բնականաբար, մտածում էր հայ ազգի շահի մասին, բայց այդ չի նշանակում, թէ նրա բոլոր գործերը օգտակար են եղել հայութեան համար, կամ թէ նա ռուս կառավարութեան կողմից չի շահագործուել յօգուտ ռուս քաղաքականութեան: Ոչ միայն այսօրւայ, այլ եւ այն ժամանակւայ պայմաններում պարգապէս վնասակար էր խրիմի հայութեան բռնի արտագաղթը դէպի Դոնի ամայի տափաստանները: Խրիմի հայութեան վիճակը կարելի չէր համեմատել այն ժամանակւայ Տանկաստանի կամ Պարսկաստանի հայերի վիճակի հետ: Խրիմի հայութիւնը, ընդհանուր առմամբ, բարգաւաճ ու խաղաղ կեանք ունէր քաքարական իշխանութեան տակ, ազգային – տնտեսական կարեւոր ոյժ էր ներկայացնում եւ պէտք չուներ գաղթելու: Ռուսները խաբէութեամբ գաղթեցրին նրան՝ խոստանալով պատերազմից յետոյ վերադարձնել իրենց տեղերը, և Յովս. Արք. Արղուրեանը կատարեց ռուսների կամքը: Մեր ըմբռնումով, սա նշանակում է «գործիք դառնալ»: Յովս. Արք. Արղուրեանի կեանքում կարելի է ցոյց տալ եւ ուրիշ այս կարգի վրիպումներ:

Իսկ ցարին ներկայացած Արղուրեան տոհմաբանութեան պատմական արժէքը ինքնին արդէն այնքան խօսուում է, որ, կարծում ենք, այդ մասին երկարելու կարիք չկայ:

ՎԷՄ ՆԻՒՐՈՂՆԵՐ

Ե. Զանթիկեան, Ֆիլատէլֆիա —
Երուսաղէմի ժառանգաւորաց վարժա-
րանին:

Պ. Վարդանեան, Ուաշինկթըն —
Հրայր — Վահան Գրադարանին, Բոլգա-
րիա:

Թէոդ. Փափաղօղլու, Աթէնքի ծա-
նօթ գորգի գործարանատէր եւ վաճա-
ռական — Ֆիխսի «Վարանդեան» Պա-
տան. Միութեան:

Գ. Աւետիսեան, Էրս ան Փրովանս
— Յարէր Յովհաննիսեանին:

